ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1880-21 առ « 20 » 07 2021թ.

Ձեր № _____ առ « » 2021թ.

«ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ
տնօրեն
պրն. Կ. Մարգարյանին

[ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21-01/112 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «հակահրդեհային գույք և սարքավորումներ» ապրանքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ ապրիլի 6-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-58/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մայիսի 12-ին կնքվել է թիվ 01/112 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3 064 802,4 (երեք միլիոն վաթսունչորս հազար ութ հարյուր երկու ամբողջ չորս) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված CP 660 մակնիշի հակահրդեհային փրփուրը, որի ընդհանուր գինը կազմում է 1 364 882,4 (մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր ութսուներկու ամբողջ չորս) ՀՀ դրամ, «ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ պայմանագրի

- 2.4.1 կետի՝ «Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,
- 2.4.2 կետի՝ «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»,
- 2.4.4 կետի՝ «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»,
- Հավելված №1-ի՝ «Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օրում»:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը, այն է՝ գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԿԱ ԸՆԴ ԿՈ ԹՐԱՅԴ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մայիսի 12-ին կնքած թիվ 01/112 պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ՝
Գ. Մարկոսյան
Հեռ. 010-28-29-60, 33-08